

Հիւրասիրուի Երեւանի մէջ: «Անոր տունը գեղեցկօրէն զետեղուած է Չանգի գետին մօտ պարտէզի մը մէջ... սրահ մը, երեք կողմէն փակուած եւ մէկ կողմէն զետին վրայ բացուած, ծածկուած է ամենասուղ արեւելեան գորգերով»⁽¹³⁰⁾: Այս վկայութիւնը անջատ ուշադրութեան կը յանձնեմ պարզապէս՝ որովհետեւ հայուն տան գորգերը ոչ թէ սովորական էին, այլ անոնք օտար ուղեգիրէ մը նկատուելու չափ ազնիւ եւ արժէքաւոր էին:

Մեր Քուչակեան տաղասացը սիրազեղ կը դանձ գորգի վրայ նըստած տեսնելով իր սիրուհին.

Անցայ եւ տեսայ իմ եարն ի վերայ խալուն ցաւած...:

Օտարներէ զատ մերիներն ալ կը յիշեն հայ տան մէջ գորգի գոյութիւնը: Գողթան գաւառի հայ տան կարասիներու «աչքի ընկնող մասը կաղձում են գորգեր, որոնցից շատ հիանալիներն ու թանկագիններ կան»⁽¹³¹⁾: Գանձակի հայ տան մէջ «կան եւ փոռուած կապերտներ եւ ներքնակներ ձգուած գետնին, որուն վրայ նստում են ծալապատիկ»⁽¹³²⁾: Չանգեղուրի հայ տան կայ «մի երկու կապերտ եւ գուցէ մի գորգ»⁽¹³³⁾: Վանայ մէջ ալ սենեակը «ծածկում են գորգերով»⁽¹³⁴⁾: Մենեակին յատակին «քցում են խոսիք, որի վրայ փսխաթ կամ գորգ, պտտերի կից փռում են ներքնակներ որոնք կամ այնպէս բաց են մնում եւ կամ մի ուրիշ նեղ եւ երկար գորգով ծածկուած»⁽¹³⁵⁾: Վասպուրականի զիւղերուն մէջ «թախթերի վրայ սովորաբար խսիր, եւ երբեմն նաեւ թաղիք է քցուած լինում, իսկ երբ մի հիւր է գալիս՝ մի ներքնակ. երբեմն նաեւ մի գորգ են փռում»⁽¹³⁶⁾:

ԳՈՐԳԻՆ ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Գորգը գործածուած է նաեւ իջեւաններու մէջ: Josafa Barbaro Վենետիկցին (1471–1474) կը վկայէ որ Եգիպտոյ մէջ «բնակեցայ պանդոկ մը, հաստատուած Հասան Պէյի թագաւորին՝ ճիհանկիր Պէյին կողմէ, ուր իջեւանողները կը կերակրուին, եւ եթէ անոնք նշանաւոր անձեր ըլլան՝ իրենց ոտքերուն տակ գորգեր կը փռուին, որոնց իւրաքանչիւրը աւելի քան հարիւր տուրաք կ'արժէ»⁽¹³⁷⁾: Եթէ տուրաքը արծաթ էր՝ այն ատեն կ'արժէր ոսկեդրամ մէկ տուար, իսկ եթէ ոսկի՝ այն ատեն կրկին: Հարիւր տուար արժող գորգ մը այն ժամանակուան համար իսկապէս սուղ էր:

(130) Transcaucasia. — London, 1854, p. 215.

(131) Գողթն: — Ե. Լալայեան, արտասպում Ազգ. Հանդ., էջ 99:

(132) Ազգ. Հանդ. գիրք ԺԶ, 1900, էջ 237:

(133) Անդ, գիրք Գ.Ժ 1898, էջ 59:

(134) Անդ, գիրք Ի., էջ 124:

(135) Անդ, էջ 127: Կը վկայուի որ հին ատեն երբ կարասի չկար (փայտէ), գորգ կը գործածուէր: (Անդ, էջ 127):

(136) Անդ, էջ 121:

(137) Travels to Tana and Persia. — London, 1873.